

Եկայք ճաշեցէք, ասէր Աստուած ցձկնորսան.
 բազմէին քաղցեալքն.
 Եւ ի մէջ նոցա կերակրին քաղցելոց բազմեալ էր.
 սրորէք զարհուրէին ի նմանէ.
 Եւ գունդք զարրիէլեան սոսկացեալ
 Եւ որդիք հողոյ բազմեալ ընդ նմա
 նախ քան զաւրն զի բազմին ընդ նմա:
 Թէ հարցանիցեն վասն հացին եւ վասն հրոյն եւ վասն ձկանն,
 զիտէին թէ որ բռնադատեաց զձկունն
 որ ցրուեալ էին ի մէջ ծովուն,
 զի ժողովեցի բազմութիւնն ի մէջ փոքր զոքոյ ուռկանին,
 նա հրամայեաց հացի եւ հրոյ եւ ձկանն, եւ եղեն յանկարծ:
 Զի եցոյց նոցա եւ զհաստչութիւնն իւր որսալովն զոր ետ նոցա.
 զի հուրն եւ հացն եւ ձուկն ահա վկայեն երեքկին
 զերրորդութեան աստուածութենէն.
 ուտէին ընդ նմա եւ հայէին, եթէ ուտէ կամ չուտէ.
 Եթէ կարաւ էր նա հացի, ո՞չ կարէր նա հաստել հաց:
 Եկեր ընդ նոսա, զի գուշակեցէ,
 թէ արդարեւ մարմին զգեցաւ.
 եցոյց նոցա զպլիսն, զի ծանուցէ,
 թէ նոյն ինքն կենդանացաւ.
 Եւ թէ իբրեւ զայսոսիկ արար,
 կամեցան ստել զյարութիւն նորա.
 Եթէ անփոյթ արարեալ էր, քանի՞ եւս սուտ առնէին:
 Շրջեալ զհացն եւ զձուկն առաջի նոցա, եւ ոչ հաստեաց ջուրս.
 զի զիտէր, զի որ ոք ծարաւէր,
 երթայր ըմպէր ի ծովն եւ գայր բազմէր.
 Եւ ոչ զինի հաստեաց՝ իբրեւ կարէր,
 զի ուսուցէ մեզ աշակերտելոցս,
 զի եթէ պիտոյ ինչ էր զինի, տայր զնա առաքելոցն:
 Նաեւ ասաց իսկ եթէ Ոչ արբից միւսանդամ ի ծննդենէ որթոյ.
 զարմանք են այս եւ յոյժ ժպրհեցի
 պատմել զամանէ յայտնապէս.
 զի հաստեաց զինի ի հանգիստ մեր,
 եւ մի ցասուցուք նովաւ զԱստուած.
 արբոյք չափով զինի, զոր ճաշակեցին եղբարք մեր.

56 E կ'աւարտի նոցա եւ զհաստչութիւնն իւր որսալովն զոր ետ նոցա. զի հուրն... F (էջ 62) լրացուցած եմ առնելով F-ն: — 58 F (ձեռագիրը) աստուածութեանն: — 69 FD զիտէին:

80 զի է՝ որ ոչ ճաշակեաց զնա, եւ է՝ որ սակաւ.
 զի գուցէ լիտեցուցէ զաւելի ըմպողան:

Կ Յ Ո Ւ Ր Գ Խ Ս .

- 1 զիպեսցի մեզ:
- 2 Գոհութիւն այնմ որ աւգնեցէ տկարութեանս մերում,
- 3 եւ ոչ տայ վատել զի մի արանջեցուք:

81 կ'աւարտի եւ Բրիտանի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:
 խԱ. B 55a: D 107: E 78r:
 1 Ունիմք միայն հետեւեալ տողերը. որոնք կցուրդիս աւարտը կը կազմեն: D անտես-
 լով զիպեսցի մեզ, 2—3 տողերը կցած է իս կցուրդին իբրեւ վերջաբան:
 Հրտ. 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻՍ Օ. ԿԵԹՈՂԻԿՈՍ ԸՂԹՇՄԵՐՑԻ
 (Շարունակութիւն)

2. ԱՂԹԱՄԱՐՑԻՈՅ ՏԱՂԱՐԱՆԸ
ՁԵՌՆԱԳԻՐՔ

Տարիներ յառաջ, 1914ին ձեռնարկած էի հրատարակել Գրիգորիս Աղթամարցոյ հարգատ ատղերը համեմատութեամբ ինձ մատչելի ձեռագիրներու եւ տպագրութեան: Ա.—ԻԱ. տողերը տպագրուած էին, երբ ծագեցաւ առաջին համաշխարհական պատերազմը: Ստիպած էր ժամանակը ընդհատել տպագրութիւնը: Ա.Ա. եւ այլ գրադրութեան չթոյլատրեցին մինչեւ այսօր հրատարակ հանել գայն: Այս տեղ հակիրճ նկարագրութեամբ պիտի ներկայացնեմ վիեննայի Միլիթարեան Մատենադարանի այն ձեռագիրները, որոնց հիման վրայ պատրաստուած էին յիշեալ տպագրութեան ընդհատմանը:
 1. Թ. 684 (A): Ձեռագիրս, գրուած էր Ժ2. դարու երկրորդ կէսին, հաւանօրէն Ձաքարիա Գնունեցոյ զրչէն, կ'ամփոփէ իր ծոցը հաւաքածոյ մը Աղթամարցոյ տպագրութեան թուով, թե եւ թէ թերի, թուղեր ինկած ըլլալու պատճառով: Ասոնք են Ա. 9—Ը, ԺԱ, ԺԳ—ԺԷ, ԺԿ—ԻԲ: Ձեռագրին նկարագրութիւնը տես Ձաքարիա եպիսկոպոս Գնունեաց եւ իր տողերը, էջ 21—23:
 2. Թ. 344 (B): Ընտիր Տաղարան մը, գրուած Ժ2. դարու վերջին քառորդին Մի-

նաս թոխաթցիէ. նկարագրութիւնը Տաղարան, Յուլիան, էջ 792—797: Աղթամարցոյ տողերէն կան հոս՝ Գ—Է, ԺԲ, ԺԳ, ԺԷ, ԺԹ—ԻԲ:
 3. Թ. 663 (C): Հաւանօրէն ԺԷ. դարէն. նկարագրութիւնը՝ Ձաքարիա եպ. Գնունեաց, էջ 23: Ունինք հոս՝ Ե, Զ, Ժ, ԺԳ, ԺԷ—ԻԲ:
 4. Թ. 797 (D): Տաղարան, օրինակուած կերպով Թ. 43 ձեռագրէն 1909ին, գրուած 1604—1626 տարիներուն Յակոբ երէցէն եւ իր որդւոյն՝ Սաստուածատուր զրչէն: Ունի Բ, Գ, ԺԳ, ԺԶ—ԺԹ տողերը:
 5. Թ. 976 (E¹): Տաղարան, գրուած 1614—1623 տարիներուն: Կան հոս Գ, Ի, ԻԱ. եւ ԻԲ տողերը:
 6. Թ. 1042 Հ. Աճառեանի կազմած Տաղարանը, օրինակուած էջմիածնի եւ թուրքի ձեռագիր Տաղարաններէ, նուէր մեր Մատենադարանին, ստացուած 1932ին:
 7. Թ. 69 (O). Ժողովածոյը 1662էն (հմտ. Տաղարան, անդ, էջ 310—313: Ասկէ է Բ. տողը:
 8. Թ. 156 (P): Տաղարան գրուած 1758ին (հմտ. Տաղարան, անդ, 461): Ե. տողը:
 9. Թ. 263 (L). Հաւաքածոյ, գրուած 1705—1714ին (հմտ. Տաղարան, անդ, 669—678): Թ. եւ Ժ. տողերը:
 10. Թ. 343 (G): Տաղարան իբր 1671էն.

չատ խառնակ եւ յոռի գրչութեամբ: Ունինք հոս՝ ԺԼ, ԺԹ. տաղերը:

11. Թ. 405 Տաղարան (E). ԺԶ. ԺԽ. դարէն (Տաշեան, էջ 856—857): Գ. տաղը:

12. Թ. 577 (M). Տաղարան, գրուած 1742ին. տես Չաքարիա Գնունեցի, էջ 24: Գ. տաղը:

13. Թ. 647 (F): Տաղարան ԺԼ. դարէն (տես Ակինեան, Յովնաթան Նաղաշ, էջ 65): Ե. տաղը:

14. Թ. 1002: Տաղարան, գրուած 1645ին: Ունինք այստեղ Գ, ԺԷ, ԺԹ տաղերը:

15. Թ. 1. Տաղարան Շաւարշ Վ. Սահակեանի յեւզովիա. արտագրուածին (q): Գրուած է 1624ին ի Սեբաստիա Բարաղամ գրչէ: Ունինք հոս ԺԳ, ԺԸ տաղերը:

16. Թ. 2. Տաղարան Շ. Վ. Սահակեանի (s): Գրուած է եւզովիա 1619ին: Ունի Ա, Գ, Ի—ԻԲ. տաղերը:

17. Թ. 1682. Տաղարան Վենետիկի Միւթարեանց Մատենադարանի. ասկէ օրինակած եւ արամազրած է ինձ Հ. Մ. Պոտուրեան ԺԶ. տաղը (z):

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հայերգ. մեղեդիք, տաղք եւ երգք. հաւաքեաց եւ հրատարակեաց Արիստակէս Վ. Տէվիկանց, Թիֆլիս 1882 (H): Ունինք այս տեղ Դ, Ե, Ը, Ժ, ԺԳ, ԺԸ—ԻԲ տաղերը:

2. Կ. Կոստանեանց, Գրիգորիս Աղթամարցին եւ իւր տաղերը, Թիֆլիս 1898 (K): Ունի Դ, Ե, Թ, Ժ, ԺԳ, ԺԵ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ եւ ԻԲ տաղերը: Կոստանեանց օգտուած է չորս, 1617ին, 1647ին, 1695ին եւ ԺԷ. դարուն գրուած ձեռագիր Տաղաններէ:

3. Կ. Կոստանեանց, Նոր Ժողովածու. Միջնադարեան Հայոց տաղեր ու ոտանաւորներ, պրակ Գ. Թիֆլիս 1896 (K):

4. Մանանայ. Ժողովեաց եւ ի ըյս էած Գ. Վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս 1876 (Q): Կան հոն ԺԷ, ԺԹ, Ի, ԻԱ տաղերը:

4. Հայ Աշուղներ. Ժողովրդական Հայ երգիչներ եւ տաղասացք. հաւաքեց Տրդատ եպ. Պալեան. հատոր Բ., Իգմիր 1912 (P¹): Կը բովանդակէ Դ—Է, Թ, Ժ, ԺԳ—ԺԵ, ԺԷ, ԺԹ, Ի. տաղերը:

5. Արշակ Չօպանեան, Հայ էջեր. մեր նախնեաց բանաստեղծութիւնն ու արուեստը, Փարիզ 1912 (t): Ունի ԺԲ. տաղը:

6. Ստեփանոս Կանայեանց, Յուցակ հայերէն ձեռագրաց Թիֆլիսի Ներսիսեան Հոգեւոր Դպրանոցի, Թիֆլիզ 1893 (N): էջ 61 հրատարակած է Թ տաղը:

7. Տաղարան Արգար դպրի, Վենետիկ (e¹). ունի ԺԸ տաղը:

8. Բագմալէպ, Վենետիկ (a): 1861, ԺԸ. 1909, ԺԱ տաղերը:

9. Բանասէր ամսագիր Հիսարլեանի, Կ. Պոլիս 1851 (b): ԺԸ տաղը:

10. Երկրագունտ, Կ. Պոլիս (Y): Ունի Ե եւ ԺԸ տաղերը:

11. Պատկեր, Կ. Պոլիս (x): ԺԳ. տաղը:

12. Արեւելեան Մամուլ, Չմիւսնիա (Z): Ունի ԻԲ տաղը:

13. Հանդէս Ամսօրեայ (u): 1896, ԺԹ տաղը, 1915. ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ, ԻԲ տաղերը:

14. Հայոց Նոր Վկաներ, հրատ. Յ. Մանուկեան եւ Հ. Աճառեան, Վաղարշապատ 1903, էջ 353—358: (N¹) ԺԵ տաղը:

15. Տաղարան փոքրիկ եւ գեղեցիկ, Կ. Պոլիս, անթուական (ԺԸ. դարու վերջին քառօրդին. d), էջ 114—119 եւ 123—124. ԺԸ տաղը (կիսով):

ՏԱՂԵՐ

Այստեղ կու տամ տաղերու թիւը, այբուրենական կարգով, ներս առնելով նաեւ Գանձն եւ Մեղեդիք:

1. Տաղ ի Ա. Աստուածածին յերգ երգոց գրացն:

Ահա այգիք մեր ծաղկեցան...

Յօրինուած է Ա.—Բ. տնակապ սկզբնատուերով. եւ 4—4 յանգերով:

Ձեռագիրք ABD, եւ էջմիածին, Թ. 1636, 65ա. 1637 (ԺԸ). 187բ (ԺԷ): Երեւան, 395, 13բ:

Հրատ. HK եւ Պալեան, Հայ Աշուղներ, Բ. 100—102, Երեքն ալ Ա.—Ճ տուները. վերջին երկու տուները կը պատկանին «Աստուածանկար պատկեր» տաղին: Ամբողջը ըյս կը տեսնէ առաջին անգամ մեր հրատարակութեան մէջ. Դ. տաղ, էջ 13—19:

Գրիգորիս ազգուած է հոս Առաքել Սիւնեցոյ Ա. Քերթուածէն (էջ 1—7):

2. Ուղերձ առ վարդապետն իւր:

Այրէն մինչեւ ի Քէն քենէ զանգատիմ ես, Բաներս ո՞ւմ ասեմ, Երբ դու լսող չես...

Տես վարը, 4. Երկրայական տաղեր, § 2:

3. Տաղ Ա. Աստուածածնի:

Անեղին տաճար, բանին բարերար...

Աղթամարցոյ շատ սիրուած տաղերէն մէկն է. մեր հրատարակութեան համար ունէինք AGEMs ձեռագիրները: Կը յիշեմ նաեւ էջմիածին Թ. 1637, 233բ (ԺԷ): 2393, 174ա էջմիածին Թ. 1637, 233բ (ԺԷ): 2398, 171ա (1613): (ԺԷ): 2394, 42ա (ԺԷ): 2398, 171ա (1613): Թուրիզ, Լիլաւա, 3, էջ 28բ (կիսատ), Մասնաւորաց, 1, էջ 154—156. Արամեան, 43, էջ 346ա (Գանձարան). հմտ. Աճառեան, Գանձարան, 468: Երեւան, Պետ. Թանգ. 383, 282բ (1614): 395, 12բ: Անտոնեանց, 125, 134ա: Բերլին, 67, 231բ: Բրիտ. Թանգ. 110, 15ա: Հայէպ, Ա. 50, 6ա: Բ. 28, էջ 38: Վենետիկ, Թ. 1330 (Բագմալէպ, 1932, էջ 216:

Հրատարակուած է. Տաղարան Արգար դպրի, էջ 28—29: Տաղարան վայելուչ. Կ. Պոլիս 1701, էջ 6—7: Պալեան, Հայ Աշուղներ, Բ., 106—107: Մեր հրատարակութիւնը՝ տաղ Գ, էջ 10—12:

4. Ի սուրբն Մարիմոսն ճգնաւոր:

Անձին եւ անսկիզբն է Հայրն Երկնային...

Մեր հրատարակութիւնը՝ ԺԶ. տաղ, էջ 52—62, կատարուած է DZ ձեռագիրներէ: Երբորդ օրինակ ըու բաղդատութեամբ: Երբորդ օրինակ (1611) ձեռագրին մէջ այսպիսի խորագրի տակ. «Ի Գրիգորիս Աղթամարցոյ ասացեալ տանաւոր զվարս Մարինոսի սուրբ ճգնաւորին»: Կը յիշուի երկու օրինակ ալ էջմ. Գէորդ. Յուց. Թ. 47 եւ 86:

Աղթամարցին գրած է տաղս կամ Ս. Մարինոսի տաղաչափեալ վարքս 1516ին առ պետին: Հաւանական է որ այս տարւոյն Գրիգորիս իր ուսուցչին հետ այցելած ըլլայ Ս. Մարինոսի վանքը, որ կը գտնուէր Հայոց Չորի Կեմ եւ Կալպալասան (Ոստան դաւառի) ձորի Կեմ եւ Կալպալասան (Ոստան դաւառի) վանքերուն մօտերը (տես Ոսկեան, Վասպուրական—Վանի վանքերը, Մասն Գ., Վիեննա 1947, էջ 778—780):

Ս. Մարինոսի վանքը ԺԶ. դարու սկիզբը ծաղկեալ վանքերէն մէկն էր: Խ. Լեւոնեան, Դատապարտուած արեղայ մը, որ մահէն վերջը կ'արդարանայ, Բիւզանդիոն 1905, Թ. 2758, յառաջ կը բերէ Ս. Մարինոսի մասին ժողովրդական աւանդութիւն մը. կը գրէ ի մէջ այլոց. «Այս վանքը կը գտնուի Վանայ եւ Չորի միջեւ եղած բարձրկեկ քա-»

րարակի մը ցից կատարին վրայ եւ այս պատճառաւ կը կոչուի Սրբու վանք...:

Այժմ շարաթացեալ վիճակ մ'ունի... սակայն եւ այնպէս ցարդ կանգուն կը մնայ իր քարուկիր եւ հոյակապ տաճարը...: Ունի նրբակերտ ներքնակամարներ. պատերու ձեքմակ ձեփին վրայ կը նշմարուին զանազան սուրբերու գունաւոր եւ հսկայ պատկերներ: Կ'անուանուի նաեւ Կաթնալանք եւ աղբիւրը՝ Կաթնաղբիւր: «Կ'աւանդուի թէ երբ վերայիչեալ սիրորդին Ս. Մարինոսի խնամոց յանձնուեցաւ... իր կուսական ստիւքներն ալ յորդառատ կաթով մը եռալ սկսեցին... սասոր համար ամենագգի ուխտաւորներ Ս. Մարինոսի գերեզմանին վրայ ուխտի կու գան եւ յիշեալ Կաթնաղբիւրի ջուրը խմելով իրենց ուխտերը կը կատարեն»: Լեւոնեան Ս. Մարինոսի շուրջը պատմուածքը հայկական աւանդակէպ մը կը համարի. բայց Գրիգորիս գրած է Սրբուհոյն չափական տաղը համասօտելով Յայտմաւորքի կամ Հարանց վարքի մէջ պահուած բնագիրէն, որ ինչպէս Հայոց, նոյնպէս Արեւելեայց եւ Արեւմտեայց քով ենթարկուած է զանազան խմբագրութիւններու:

5. Առ սուրբ Անտոն Թեբայեցի:

Աստուածանրկար պատկեր յօրինեալ ի յարարողէն...

Մեր բնագիրը (ԺԳ, էջ 40—43) վերակազմուած է համեմատութեամբ ABCDգ ձեռագիրներու: Կայ նոյնը նաեւ Շ. Վ. Սահակեանի Թ. 3 Տաղարանին մէջ, էջ 92—96. Վենետիկի Ե. Տաղարան (յամէ 1559) եւ Ընդ. Ոս., էջ 391: էջմիածին, Թ. 1636, 69բ: 1661, 773ա (ԺԷ): Երեւանի, Պետ. Թանգ. Թ. 383, 446ա (1611): 395, 16բ: 1026, 6ա (1595): Բրիտ. Թանգ. 108, 267բ: Չմմառ, Թ. 172, 1ա (սկ. պակաս): էջմիածին, Գեւորգ. 281, 245ա. ասկէ Աճառեան, Տաղարան, Թղ. 162ա:

Հրատարակուած է. Պատկեր 2 (1892), 571—572: Տեւկանց, Հայերգ, 120—122: Կոստանեանց, Գր. Աղթ. 72—74. եւ Պալեան, Հայ Աշուղներ, Բ., 107—109:

Աղթամարցոյ ստեղծագործութիւններու յաջող տաղերէն մէկն է այս: Խորհրդական համեմատութիւններով կը պատկերէ Անտոն Թեբայեցոյ, անապատի ծաղկին հոգեկան նկարագիրը. ինչպէս բացայայտ կը խոստովանի ինքնին.

14. Ի վկայն Աստուածատուր Խաթայեցի : Գովեմք զվկայն արի, զմանուկն Խաթայեցի...

ԺԳ., էջ 44-45: Տաղս ծանօթ է ինձ միայն A ձեռագրէն: Ունի զայն նաեւ Պալեան, Հայ Աշուղներ, Բ., էջ 144-145 ձեռագրէ մը, ուր կը պահուէին տ. 11-14. Այս օրինակը համեմատութեան չեմ առած հրատարակութեան մէջ, որովհետեւ ուշ հասած էր այն ինձ:

Աստուածատուր Խաթայեցի վկայած է 1519ին: Այս վկայի վկայարանութիւնը գրած է Գրեգորիս ոտանաւոր չափով (տե՛ս ԺԵ. տաղն՝ «Վաճառական մի հայ...»): Այս տաղը յօրինուած է հաւանօրէն իբրեւ Մեղեղի այդ վկայարանական տաղին:

15. Տաղ սիրոյ :

Դու գրախոս Եղեմայ տընկեալ յԱնեղէն...

ԻԲ., էջ 96-101: Տաղս վերակազմուած է համեմատութեամբ ABCEs ձեռագիրներու եւ HKQP տպագրութեանց, որոնք են, Հայերգ, էջ 95-98. Կոստանեանց, Գր. Աղթ., էջ 62-66. Սրբանձտեանց, Մանանայ, էջ 252-254. Պալեան, Հայ Աշուղներ, Բ., էջ 115-118 եւ Ակինեան, Հանդ. Ամս. 1915, էջ 62-64: Կը յիշեմ ուրիշ օրինակներ՝ էջմիածին, Թ. 1636, 166բ: Երեւան, Պետ. Թանգ. 385, 108ա: 395, 42բ եւ 126ա: Վրենյան, Թ. 1042 (Աճառեան, Տաղարան), 166ա, որ ունեցած է ձեռքի տակ «B. 52բ-53ա». եւ էջմ. Գեւորգ. 281, 26ա: Բրիտ. Թանգ. 108, 253ա:

16. Տաղ սիրոյ :

Դու ես արեգակն, լուսին ի լրման...

ԻԱ., էջ 90-95: Հրատարակութեան համար ունէի ABCEs ձեռագիրները եւ HKPQ տպագիրները:

Հրատարակուած է նաեւ Հանդ. Ամս. 1915, էջ 60-62: Կան ձեռագիրներ նաեւ էջմիածին, Թ. 2398, 147բ: Երեւան, Պետ. Թանգ. 395, 49բ: Վենետիկ, Տաղարան Ե. եւ Ոտանաւորք Առաքելի, է:

Հայկ Աճէմեան ունեցած է տաղէս օրինակ մը, որ կը սկսի. «Գրեգոր Աղթամարցու սասցեալ: Յուներդ է քաման...» (հրատ. Յուսաբեր, 1932, Թ. 1039. այն է «Դու ես արեգակն...», ԻԱ. տաղը, սկսեալ 29 տողէն մինչեւ վերջը, էջ 92-95):

17. Ի սուրբն Անտոն Թեբայեցի :

Դու ես յԱղինայ զրախտէն...

Զ., էջ 24-26: Տաղս ունին ABCE¹ տաղարանները: Վենետ. Ա. Տաղարան, էջ 607 եւ Ե. Տաղարան (ԲԶՄ. 1905, էջ 498): Հրատարակած է առաջին անգամ Պալեան, Հայ Աշուղներ, Բ., էջ 121-122: Ձեռագիրները խորագրին մէջ չեն նշանակած տաղիս նիւթը: Ես համարած էի ուղերձ «սու Յիսուս Փրկիչ», որ ուղիղ չէ: Տաղիս բովանդակութիւնը շատ լաւ կը պատշաճի Ս. Անտոն ճգնաւորին. ան է «Կինամոն ի Թեբայիդ» (էջ 25, տ. 26):

18. Ապաշաւանք անձին :

Եղուկ ու հազար մի վայ...

Թ., էջ 31-33: Տաղս ծանօթ է ինձ միակ ձեռագրէ, այն է L (Վրենյայի Թ. 263, 367ա, յամէ 1706), որ խորագիր կը կրէ. «Գրեգորի սասցեալ»: Ներսիսեան Վարժարանի Թ. 31 ձեռագիրը կը խորագրէ. «Տաղ Գրեգորիսի Աղթամարեցոյ է»: Այս ձեռագրէն հրատարակած է տաղս առաջին անգամ Ստեփան Կանայեանց, Ներս. Վարժարանի ձեռագրաց Յուշակիրն մէջ, Թիֆլիս 1893, էջ 61: Նոյնը հրատարակած են նաեւ Կոստանեանց, Գր. Աղթ., էջ 85-86 (անթուական տաղարանէ մը) եւ Պալեան, Հայ Աշուղներ, Բ., էջ 123-124:

Գրեգորիս ստորագրած է իր անունը եւ գրութեան տարին տաղիս աներու սկզբնատառերով «Եղկիլի Գրիգորիսն ասել է քվիւն ԶԿԻ», այն է 1515:

19. Մեղեղի Ս. Խաչին Ուռնկարու :

Ոտատուանիմք ըզՄիածին...

Տես վերագոյն Թ. 11 Գանձը:

20. Տաղ վարդին եւ Բլբուլին :

Ծաղկունքն ասեն. Հերիք արա...: ԺԹ., էջ 75-83: Աչքի առաջ ունէինք ABCDG ձեռագիրները եւ HKPQ տպագիրները: Բացի յիշեալ ձեռագիրներէ ծանօթ են ինձ Վրենյան, Թ. 1002, 169բ: էջմ. 1636, 44բ: Երեւանի Պետ. Թանգ. 383, 277ա: 385, 102բ: 395, 46ա: Զմմառ, Թ. 172, 28ա: Երուսաղէմ, Թ. 1417, 200ա: Աճառեան, Տաղարան, 168ա, որ օգտուած է «B. 42բ-47ա». Դադեանի Թ. 27, էջ 140ա-145ա. էջմ. Գէորգ. 281, 20բ-23ա ձեռագիրներէ: Վենետիկ, Ե. տաղարան:

Յաճախ հրատարակուած է տաղս.

1. Սրբանձտեանց, Մանանայ, էջ 258-262 (միայն 1-92, 129-140 տողերը): 2. Տէվկանց, Հայերգ, էջ 98-103 (տողերս՝ 1-124, 133-152): 3. Յոննեան, Հանդ. Ամս. 1896, էջ 117 (=Միջնադարեան աղ-ղային տաղաչափութիւնն ուսմիախառն, Վրենյան 1911, էջ 34-35) քաղուածարար: 4. Կոստանեանց, Գր. Աղթ. 48-53, համաձայն 1695ին եւ 1617ին գրուած Տաղարաններու. սակէ 5. Պալեան, Հայ Աշուղներ, Բ., 125-129 եւ 6. Հանդ. Ամսօրեայ 1915, էջ 55-58:

Աղթամարցոյ լաւագոյն տաղերէն է գրուած է 1523ին Աստուածատուր Մեծոգոյ փեցոյ խնդրանքով: Տաղս ներկայացուած է սիրոյ երգ, բայց կը թուի, թէ այլարանական «սիրարանութիւնն» ըլլայ Հոգւոյ եւ Մարմնոյ: Կը համարիմ թէ այս տաղին առաջին մասն է «Գարունն երեկ» տաղը, նոյնաչափ եւ համակարգ: Հոգին Բլբուլի եւ Մարմինը Վարդի զիմանութեան տակ՝ Կորուսորը տկար սեռին հանդէպ կը ներկայանայ խանդաղատալից եւ հոգածու: Այլուր (Հանդ. Ամս. 1915, էջ 49) նկատած էի տաղիս մէջ Աստուածատուր Խաթայեցոյ վկայարանական պատկերը:

Տաղիս չափն է 4-4. տուներու վերջնատառերը կը յօդեն Ա-Գ:

21. Գանգատ հոգւոյ :

Մարմինս ըզհոգիս զըրկէ...: Ժ., էջ 34-35: Ձեռագիրները՝ CL խորագրին մէջ չեն նշանակած տաղիս նիւթը. ինձմէ է «Գանգատ հոգւոյ». եւ է Հոգւոյ եւ Մարմնոյ վիճարանութիւնը:

Հրատարակուած է Տեւկանց, Հայերգ, էջ 150-151. սակէ՝ Կոստանեանց, Գր. Աղթ., էջ 83 եւ Պալեան, Հայ Աշուղներ, Բ., էջ 130: Տաղս կը գտնուի նաեւ Երեւան, Պետ. Թանգ., Թ. 873 ձեռագրին մէջ:

22. Տաղ սիրոյ :

Մաքուր պատկերով նըման հրեշտակի...: Ի., էջ 84-89: Բնագիրը վերակազմուած է ABCEs ձեռագիրներու համեմատութեամբ: Նկատողութեան առած ենք նաեւ տպագրութիւնները, որոնք են. 1. Տեւկանց, Հայերգ, էջ 93-95: 2. Կոստանեանց, Գր. Աղթ. 57-61, որ ունեցած է ձեռքի տակ 1595ին եւ

1617ին գրուած Տաղարաններ: 3. Արեւելեան Մամուլ, 1885, էջ 74: 4. Պալեան, Հայ Աշուղներ, Բ., 131-133: 5. Հանդ. Ամս. 1915, էջ 59-60: Այլ ձեռագիրներէն կը յիշեմ. էջմիածին 1636, 164ա: Գեւորգեան, 281, 24բ: Երեւան, Պետ. Թանգ. 383, 28բ: 395, 40ա: Երուսաղէմ, 1417, 206ա: Հայերգ, Բ., 28, էջ 827 (Միւրմէեան, Յուշ. 89): Վենետիկ, Ե. Տաղարան, Առաքել Միւնցոյ Տաղ. է.: Բրիտ. Թանգ. 108, 251: Աճառեան, Տաղարան, 170:

Տաղս խորագրած եմ «տաղ սիրոյ». բայց է Գովեստ գեղեցիկի. կամ նկարագիր կարծեմ երիտասարդի. արդեօք իր եղբայրներէն մին կամ մի՞ւսը նկատի ունի (համտ. Հանդ. Ամս. 1915, էջ 50): Տաղիս մէջ ազուցած է Աղթամարցին պարսկերէն եւ թուրքերէն բազմաթիւ բառեր եւ տողեր: Կոստանեանց կը գրէ. «Հաւանական է, որ այդ օտարագրի նախադասութիւնները կամ ոճերը պարզ փոխառութիւններ են ժամանակին հանրածանօթ օտար երգերից. այսպէս մտածելու տեղիք է տալիս այն երգի մի դարձուածը, որ է. «ղէհէ հիւսնուսուրաթ» եւ այլն, կամ «զի հուսնու սուրաթ». այս տեսնում ենք Պարսից Ձամի երգչի Իւսուֆ ու Զուլիխա երգի մէջ» (Գր. Աղթ., էջ 61):

22ա. Տաղ սիրոյ :

Մեր տէրն է բազմէր ի բարձր աթոռին... Տես Երկրայականք § 7:

23. Տաղ ի վերայ վարդին եւ Պուլպուլին :

Յետ զնալոյ վարդին եկ հլրուն յայդին...

ԺԲ., էջ 65-74: Հրատարակութիւնս չիմնուած է ACDGq ձեռագիրներու վրայ: Ասոնցմէ ամէնէն ընտրելագոյնն է A, որ եւ բնագիր ընտրուած է. դժբախտաբար ձեռագիրս՝ տող 98ի քով թղթեր ինկած ըլլալով՝ այժմ կիսով կ'ընծայէ տաղը. այս դէպքին յեցանք C օրինակին վրայ, որ զայն ամբողջութեամբ ունի. ասոր առանձնայատրուութիւններն ուղղագրութեան մէջ՝ հետեւելով Աի ուղղագրութեան՝ ուր պէտք էր փոփոխեցինք, առ այս կուսան ունենալով մեզի նաեւ Dq օրինակները եւ անոնց կից տպագրութիւնները: Այնպէս որ մեր վերակազմած բնագիրը թէ՛ ամբողջութեամբ կը ներկայանայ, եւ թէ՛ միաբան հնագոյն օրինակներու:

Ինձի ծանօթ են նաև հետևեալ ձեռագիրները. Երեւան, Պետ. Թանգարան, Թ. 395, 136ա: Էջմիածին, Թ. 1636, 27ա: Գե. 281, 17բ—20բ: Չմմառ, Թ. 172, 27ա: 328, 33բ: Պարիս, Ազգ. Մատ. 286, 121ա: Թաւրիզ, Աճառեան, Յուզակ, էջ 63ա: Թօփ-ճեան, Յուզակ Դաղեան ձեռագրաց, էջ 41—42: Հալէպ, Սիւրբէեան Յուզակ, Բ., էջ 89: Վենետիկ, Թ. 242, 1ա (Յուզակ, Բ., 623): Ե. Տաղարան: Տաղարան 1606է. Հմմտ. Բազմավէպ, 1907, էջ 401: Աճառեան, Տաղարան:

Հրատարակութիւնք: 1. Տաղարան Արարիկ, Վենետիկ 1568, էջ 30—31 (Հմմտ. Հանդ. Ամս. 1888, էջ 140—141): 2. Տաղարան, որուն ոչ ապագրութեան տեղն է ոչ տարին նշանակուած է. հաւանօրէն ապուած Կ. Պոլիս ԺԸ. դարու վերջերը, էջ 114—119 եւ 123—124: 3. Բանասէր, Կ. Պոլիս 1851, էջ 338—340: Բազմավէպ, 1861, էջ 146—147: 5. Երկրագունդ, Կ. Պոլիս 1886, էջ 199: 6. Հայերգ, էջ 70—72: 7. Կ. Կոստանեանց, Գրիգոր Աղթամարցի, էջ 38—45 (յեցած 1617ին եւ 1695ին դրուած Տաղարաններու վրայ): 8. Պարեան, Հայ Աշուղներ, Բ., 135—140: 9. Հանդ. Ամս. 1915, էջ 52—55:

Թ. 1 ունի տ. 113—139: Թ. 2՝ տ. 1—80: Թ. 3՝ տ. 1—85: Թ. 4՝ տ. 1—36: Թ. 6՝ տ. 37—68: Թ. 8 չունի տ. 109—112: Ամբողջ են Թ. 5, 7, 9:

Տաղս ուսուցիչի թարգմանեց «Ամէն առաւօտ եւ լոյս» տաղին հետ Կ. Կոստանեանց՝ Роза и Солювей Къ положенію армянъ в XVI вѣкѣ (по поводу стихотворенія Григорія Ахтамарскаго). Москва 1913 (Հմմտ. Գ. Վեռնեանի մատենախօսականը, Մշակ, 1914, Թ. 111):

Առաջին հրատարակիչներուն անծանօթ մնացած էր տաղիս երգիչը. Մկրեան երկրայութեամբ կ'ընծայէր Աղթամարցոյ. Կոստանեանց միայն մուծեց աներկրայ Գրիգորի միւս տաղերու շարքին մէջ: Բազմավէպի հրատարակիչը վայրկեան մը փորձուած է մինչեւ անգամ Աշոտ Ա. Բագրատունւոյ օրերուն երգուած համարիլ, ուսկարանութիւններն միայն դժուարութիւն պատճառած են իրեն (էջ 147 «այլ իրեն ուսկարան եւ տաճիկ բացատրութիւնները յայտնի կ'ընեն որ աւելի նոր է»): Թէեւ վե-

նետիկի Ե. Տաղարանին մէջ կարելի էր յայտնի տեսնել նաև հեղինակին անունը:

Հիմայ, երբ ծանօթ են բազմաթիւ ձեռագիրներ, որոնք յայտնուած են կրեան հեղինակին անունը, այս մասին տարակուսիլ աւելորդ է:

Ի՞նչ առթիւ երգած է զայն Գրիգորիս, կամ ի՞նչ կը պատկերէ այլաբանական երգս: Բալմալիպի հրատարակիչը (Հ. Ալիշաճեան) իւր վերջարանին մէջ վերլուծելով տաղս կը գրէ. «Ասիկայ տխուր ժողովրդական երգ մը եղած պիտի ըլլայ, կամ լաւ եւս ըսել, անշուշտ սրբաբարձարմաններու յատուկ եղերգութիւն մը, — եթէ չէ ցաւած սրտի մը եւ ամուսնոյ իր հարսին դժբախտ դիպուածով մը ճամբորդութեան ժամանակ վախճանելուն վրայ ըրած ողբը» (էջ 147):

Կ. Կոստանեանց հոն պատկերացուած կը համարի ժամանակակից հայ քաղաքական կեանքը, որով բլրուն կողբաց ազգին մահաբազան բռնակարներէն կրած տառապանքը, եւ կը բաղձայ տեսնել վարդը՝ ազգին խաղաղական՝ անդորր բարօրութիւնը (Հմմտ. Մշակ, 914, Թ. 111): Իսկ Աղթամարցոյ տաղերու հրատարակութեան ներածութեան մէջ (էջ 26—31) կը համարի զայն վէպ մը՝ երգուած ի գովասանութիւն վարդին:

Այս տաղը դրած է Գրիգորիս, ինչպէս վերն ախարկեցի արդէն, ողբալի արկածի մը անմիջնորդական ազդեցութեան տակ: 1533/4ին «սաստկասառոյց» ձմեռը, երբ սառեցուցած էր Աղթամարաց ծովակը եւ կղզւոյն բնակիչներն ըստ սովորութեան սառուցի վրայէն յարարերութեան մէջ էին ցամաքի հետ, երթեւեկելու ժամանակ Գրիգորիսի կրտսեր եղբայրն՝ Ամիրա Գուռջիլի՝ սառուցին յանկարծուստ տեղի տալովը՝ ջուր կ'իյնայ եւ ծովամոյն կ'ըլլայ: Չուր կ'որոնէ Գրիգորիս «բազում աւուրբ լալոտ աչօք» իւր սիրելի հարազատը. եւ ո՛չ դիակն երեւան կու գայ:

Այս արկածը այսպէս կը պատմէ Յիշատակագիր մը՝ Մարգարէ Արճիշեցի, Գրիգորիսի համար ընդօրինակած Մաղմոսարանի վերջը (1534ին ի վանս Սուխարայ՝ տես վերը ամբողջութեամբ):

«Գրեցի զսա յիշատակ Գրիգորիս կաթողիկոսին եւ ծնողայ նորին՝ Սքանտարին եւ Շահումին եւ եղբարցն՝ Ամիրայ Գուռջիլի»

բէկին, որ աճկաւ ի ծովն եւ բազում աւարբք որոնելով լալոտ աչաբք եւ ոչ գտան, եւ միւս եղբորն կանաչասաղարթ բարունակին Սմբատին, որ է սփոփան եւ ուրախութիւն վշտագնեալ եւ տրամեալ սրտի անձին իւրոյ...»:

Այս արկածին վրայ, ինչպէս Յիշատակագիրն կ'ըսէ «վշտագնեալ եւ տրամեալ սրտիս» կ'անցնէ Գրիգորիս ամբողջ ձմեռը. այս նկատմամբ ինքն ալ ախնարկութիւն կ'ընէ յաճախ.

Ըզտիւ եւ զգիշեր ողբամ անդադար Դարձեր եմ մաղասկաթ եւ չունիմ ղըրար... Գիշերըն մինչ ի լոյս ես մըտօք տանջիմ Ո՛ւր տարան ըզքեզ վարդ, կամ ուր թագուցին,

Չխարդ մոռանամ ես ըզքերըն քոյին Սոցեցաւ սիրտս ու լերթեալ կըսկըծաղին... Չի առանց քո տեսուդ ես եմ երերուն Գիշերըն բուն գայր՝ այլ կենամ արթուն, Նեղեալ եւ փղցկիմ թ' երբ լինի գարուն, Հալեր եմ եւ մաշեր ի քո կարօտուն: Սաստկասառոյց ճըմեռս ես ո՞նց անցուցի. Շատ ցաւ եւ շատ ցընոր դէմ քեզ քաշեցի:

Երբ Գարնան դռները կը բացուին, մարգերն եւ բուրաստանները կը սկսին զարդարուիլ ծաղիկներով՝ Գրիգորիս կը յիշէ կրկին իր սիրելին, կ'ելլէ միւսանգամ ի ինչիւր անոր. այս նուագ ոչ թէ նորահալ ծովակին ալիքներու մէջ, այլ ի ծաղկալիլ փնտռելու: Այսպէս յուսալով սփոփանք տալ սրտին եւ անմահացնել իւր եղբոր յիշատակը:

Ինքը՝ երգիչը երգասէր Բլբուլի դէմքը զգեցած կ'երթայ այգին փնտռելու վարդը անոր վրանին մէջ. բայց հոն չի գտներ վարդը որ նախորդ ցուրտ եղանակներուն թողուցած էր իւր վրանը եւ հեռացած: Բլբուլի այս յուսախաբութիւնը մտածմունքներու առիթ կու տայ. երբ իւր բոլոր հարներու առիթ կու տայ. կ'ըլլան, դժկամակ ցուփորձերն ընդունայն կ'ըլլան, դժկամակ կը մտնէ այգին, կը բողբօքէ այգւոյն դէմ, թէ ինչո՞ւ չէ պահպանած խնամով վարդը:

«Այգի, ընդ քեզ ասեմ, տուր ինձ պատասխան Ընդէ՛ր ոչ պահեցեր զՎարդն իմ պատուական»:

Եւ զայրութիւն մէջ անէձքներ կը թափէ այգւոյն՝ Գահուլի՛ քո ամուր պատըզ, դառնաս աւարակ...:

Իրեն սգակից ըլլալ կը հրաւիրէ այգւոյն յորդախաղաց ախուքը, կանանչասաղարթ ծառերը: Ապա կը բանայ իւր կասկածներուն դռները, մերթ Այգեգործը մեղադրելով, մերթ տարերաց եւ մերթ չըջակայից վերագրելով իւր հարազատին՝ Վարդին կորստեան պատճառը:

Յուսակտուր այգիէն՝ կը թռչի կը սրանայ բլբուլն «ի յօգքն վերին»:

Ասաց թէ հարցանեմ թոչնոցն սիրով, եթէ գիտես նոքա, յայտնեն ինձ փութով:

Բայց վայրապար: Նորածին թոչուններն ալ կը խոստովանին սգխոտութիւն:

Չքո Վարդըն չենք տեսել, Աստուած վկայ է, Գնա չըջիլ յայլ տեղ ու գնա որոնէ:

Բացասական պատասխանէն կը յուզուի Բլբուլ, եւ դարձեալ կը սկսի ողբալ յուսահատ իւր Սիրելին:

Այս հառաչանքներու մէջ կը լսէ հեռուէն Այգեգործին՝ Արարչին ձայնը, որ Վարդի մօտալուտ գալստեամբ կը մխիթարէ զինքը:

Ասաց. Մի լար, Բլբուլ, քո Վարդըն կու գայ. Եկեալ է մանուշակ վարդին փիաղայ. Թուրա խարար ամատ, սալամ ու զուղայ:

Այս աւետիսին վրայ կը մխիթարուի Բլբուլ, գոհ բերանով կ'որհնէ Այգեգործը. կը փութայ թուղթ մը գրել Վարդին, ուր կը զրուստէ անոր բարեմասնութիւնները, բացատրելով նաև իւր սրտի անչափ կարօտը անոր հեռուորութեան համար: Թուղթը կը հասնի Վարդին արքունիքը. կարգացող կը ի լու կ'ընթեռնու բարձրաձայն: Փոխարէն ի լու կ'ընթեռնու բարձրաձայն՝ մխիթարուի զինքը իւր մօտաւոր գալստեամբ, մասնանշեղով նաև թղթատարին ձեռօք իւր ո՞ւր ըլլալը:

Ասացէ՛ք թէ ի դրախտն զնա որոնէ :

Անցան օրեր, արեւն երկնքէն պայծառ փայլեցաւ. եւ ցօղն ամպերէն իջաւ վարդաստան, եւ վարդը բազմած զահոյքին վրայ ցուցուց իւր դէմքը վարագուրին ետեւէն.

Վարդն էր վարագուրով ի մէջ զահոյքին, Ծաղկունքն հաւասար երկրպագեցին :

Տեսաւ Գրիգորիս հոգւոյ աչքերով իւր հարագասն ընդ վարագուրով «ի մէջ զահոյքին» երկնից՝ շրջապատուած հոգեղէններէ, մխիթարուեցաւ եւ գոհացաւ :

Ի մահ իւր էղբօր երգած Գրիգորիսի այս ողբերգութիւնը մեր միջնադարեան բանաստեղծութեան ամէնէն ընտիր գոհարն է, զեղեցիկ նաեւ արտաքին յօրինուածովը : Այս պատճառաւ ալ յաճախ կարգացուած եւ երգուած է, եւ հզօր տպւեցրութիւն թողուցած յաջորդ Ժամանակի տաղասացներու վրայ :

Թէեւ վարդի եւ Բլբուլի խօսակցութիւնը արեւելեան, մանաւանդ պարսկական բանաստեղծութեան շատ սիրած մոտիւն է, ուստի եւ Գրիգորիս ունէր աչաց առջեւ թէ՛ պարսիկ-ատրպատիճ աշուղներու եւ թէ՛ Հայոց (Կոստ. Երզնկացի, Առաքել Սիւնեցի, Մկրտիչ Նաղաշ) քով նման պատկերներ, բայց երգս կը կրէ ինքնուրոյնութիւն մը եւ ամբողջութիւն մը, առանց ցոյց տալու օտար ազդեցութեան հետք (պարսկերէն սողերն, որոնք հոս եւ հոն երեւան կ'ելլեն, ազուցուած են հոն միայն ամբողջ կառուցուածքին զարգ. տալու համար) :

Այս տաղի ազդեցութեան տակ է Սաչատուր Խարբերդցոյ «ի զնա վարդին» տաղը¹, որ յնազանս ոչ այլ ինչ է բայց եթէ նոր խմբագրութիւն մը Աղթամարցոյ տաղին՝ յարմարեցուած Գառնան : Ի մէջ կը բերեմ քանի մը փոքր համեմատութիւններ .

¹ «Տաղ զարնան, վարդին եւ պուլպուլին զրոյցք եւ պատասխանիք՝ Սաչատուր Կեչառեցի վարդապետի ասացեալ», որուն տնագիրք կը կայանի. Ի հաշտուար անվիտտ ասացել է բանն (հրատ. ԲՁՄ. 1907, էջ 402—403) : Տաղիս հրատարակելն՝ Հ. Մ. Պոտուրեան, հանած է զայն Ստեփ. Երէց Թոխաթեցոյ 1606ին ընդօրինակած Տաղարանէն, որ այժմ վենետիկի Մխիթ. Մատ. մէջ կը գտնուի : Արդէն Պոտուրեան կասկածած է անոր հեղինակին վրայ. «Տաղիս սճը եւ լեզուն որ այնքան կուռ չէ՝ վաւերականութեան մասին կասկածելի է եւ կը թուի ժ.Ձ դարու տաղասացի մը գործն ըլլալ» (էջ 401) : Հաւանականաբար (համատ. ԲՁՄ. էջ 402) Սաչատուր վ. Խարբերդցոյ գործն է, որ ունի նման տաղ մ'ալ «Յորժամ եղեւ զարուն» (հրատ. Կոստանեանց, Նոր ժողովածու, Գ., էջ 5) :

Գրիգորիս. հաշտուար.

Յնա զընալոյ վարդին՝ եկ ի զընալ վարդին եկեալ
բլբուլն յայդին պուլպուլին
Նտես թափուր ըզվրանն, Որոնելով ըզնա ի բոլոր
քաղեցաւ հոգին, այդին.
Շըրջէր եւ հարցանէր Յորժամ զնա ոչ եզիտ
ըլիւր սիւրելին արտասուեաց յուժգին,
Կանչէր զար եւ Փըզան ի եւ զաղաղակ բարձեալ նա
մէջ զիւրերն : սորոմագին :

Ասին թէ արարիչ տէրըն Այգէգործըն նմա պատասխան անէ,
զիտակ է տասխան անէ,
... Ձքօ վարդըն չենք տե- Գրիտակ չեմ քօ վարդին,
սել, Աստուած վկայ է... տէրըն վկայ է
եկեալ պղեգործին մըլի- Բայց Ժամանակ զալոյ նոր
թարեաց զնա, բա մերձեալ է,
Ասաց մի լար բլբուլն քօ Ձի ծաղկունքըն այգոյ՝
վարդըն կու դայ, ամէնն եկեալ է.
եկեալ է մանուշակ վարդին փիտապ... :

Ապա զրեաց թուղթ Գրեալ թուղտ ստաքէ սի-
բլբուլն առ վարդն... բելին վարդին,
եւ քեզ ողջոյն դրեմ սրտով Բարեւ զրկէր նմա կարօ-
սիւրելի, սով սրտին,
Ձի առանց քօ տեսուք եւ Փութայր նա հասանել
եմ երերուն... տեսլանքն նորին :

Եւ բան մարդաբէն առ իս Որպէս գրու նըստեալ եմ
կատարի, յաւերակի,
Բան ըզհաւալըսան եմ յա- Հանդոյն հաւալըսանի ի
նապատի, յանապատի,
եղէ որպէս ըզրու ի յա- Միայնացեալ նըման եղէ
ւերակի : ճընճղղկի :

Սաչատուրը քով կան նաեւ տողեր Աղթամարցոյ ուրիշ տաղերէ, այսպէս «Դու ես արեգակն» տաղէն՝

Գրիգորիս. հաշտուար.

Իմ սիւն ի սրտի 'ւ իմ Հոգւոյս հոգի պուլպուլ
ուրախութիւն պատուական թոչունն,
Իմ շունչ եւ հոգի 'ւ իմ Իմ շունչ եւ իմ հոգի,
կենդանութիւն իմ ուրախութիւն
Աչացս ստաղի ես ի քուն Դու ես աչացս լոյս 'ւ իմ
'ւ յարթուն : կենդանութիւն

Դու ես լոյս աչերուս եւ սիւն իմ սրտի :

Գրիգորիսի այս տաղի ազդեցութեան տակ երգուած է նաեւ Սաչատուր Խարբերդցոյ «Յորժամ եղեւ զարուն» (Կոստանեանց, Նոր ժող., Գ., էջ 5 եւն) :

Բայց ամէնէն հետաքրքրականն է Ձաբարիա Գնունեցոյ «Վարդին եւ Բլբուլին» տաղը (իմ հրատարակութիւնս, էջ 30—37),

որ յօրինուած է տաղիս անմիջական ազդեցութեան տակ, որպէս թէ աշակերտը նմանողութեան օրինակ առած ըլլայ ուսուցչին զուրի գործոցը : Համեմատութիւնը կը թուում ընթերցողներուս :

23ա. Յարեայ շրջեցայ... :

Տէ'ս Դու դրախտ եղեմայ... :

23բ. Ունիւրդ է քաշած... :

Տէ'ս Մաքուր պատկերով... :

24. Ի վկայն Աստուածատուր Խաբալիցի :

Վաճառական մի հայ եւ յոյժ ճարտասան... ԺԵ., էջ 46—51 : Տաղէս ծանօթ են հեռուեալ օրինակները. Էջմիածին, Թ. 1636 (1640. Կար. 1599), 213բ—218ա : Գեւորգեան, 281, 97ա—98բ : Երուսաղէմ, Թ. 1455 : Զմմառ, Թ. 172, 31բ : Վիեննա, Թ. 684, 2մմառ, Թ. 1—48, շարունակութիւնը կը պահուի թուղթ ինկած ըլլալով) :

Առաջին անգամ հրատարակեց տաղս Առաջին անգամ հրատարակեց տաղս 1. Հ. Ղ. Ալիշան, Միտական, էջ 531 (յաւաւած 31 տող). ասկէ 2. Կոստանեանց, Գր. Աղթ. 88—91 : 3. Ամբողջականը լոյս տեսաւ՝ Հայոց Նոր Վկաներ, էջ 353—358, Էջմիածնի Թ. 1636 եւ Գեւ. 281 ձեռագրաց Էջմիածնի Թ. 141—144 : Մեր հրատարակութեան ներ, Բ. 141—144 : Մեր հրատարակութեան կառը լրացուցած ենք համեմատ Հայոց Նոր Վկաներու. ուր Էջմիածնի կրկին օրինակը (== Թ. 1636) լատինատառ գրերով, գործնք (== Թ. 1636) լատինատառ գրերով, գործնք պահպանեցինք սարուածքին մէջ : Այս ձեռագրերներու մասին տես նոյն գործի Ներածութեան մէջ, էջ ԺԶ—ԺԷ :

Աստուածատուր Սաթայեցի վկայած է Բաղէշ 1519ին : Գրիգորիս տաղս գրելու յորդորուած է հաւանօրէն իր ուսուցիչէն, որուն եւ նուիրած է :

Առ մեծ բարունակեան ճառս այս յարմարի, Որ եւ անուն նորա Գրիգոր յորջորջի. Սորին սպասուորէ եւ աշակերտի Գրիգորիս՝ մականունն իմ Աղթամարցի :

25. Ի Ս. Աստուածածինն : Տապանակ կազմեալ անփութ... :

Բ., էջ 7—9 : Բնագիրը վերակազմուած DO ձեռագիրներու բաղդատութեամբ : Ուրիշ ծանօթ օրինակներ՝ Էջմիածին, Թ. 1636,

80բ : 1661, 651ա : 1637, 211բ : 2079, 217բ : Երեւան, Պետ. Թանգ. 383, 91ա : 395, 154ա : 1026, 11ա : Զմմառ, Թ. 328, 90ա : Աճառեան, Տաղարան, 174ա (էջմ. Գեւորգեան, 281, էջ 48ա—49ա ձեռագրէն) : Վենետիկ, Թ. 859 : Թ. 171 (հին, Ընդարձակ Ու.), էջ 394 : Թ. 1139, էջ 217 (Տաղարան, Գ.) :

Վենետիկի Թ. 859ի մէջ տաղս կը գրուի «Արքային փակեալ պարտէզ» տաղին (տաղ Ա.) կից. ուսկից կ'եզրակացնէ Հ. Մ. Պոտուրեան, Բագմալէպ, 1905, էջ 498, թէ նախնարար անոր մասն, թերեւ Յորդորակն, եղած ըլլայ : Եւ շատ հաւանական է : Մինչ Ա. տաղը հիւսուած է Ա.—Բ տնակապ տաղի տաղը հիւսուած է «Տէր Գրիգորով, Բ. տաղս յօրինուած է «Տէր Գրիգորիս» տնակապերով : Էջմիածնի Գեւ. 281 կը ներկայացնէ տաղս «տաղ Մննդեանն Գրիգորիսի» : այսինքն երգելի տաթիւ Մննդեանն տօնին :

Հրատարակուած է Բագմալէպ, 1931, էջ 411 :

3. ԵՐԿԲԱՅԱԿԱՆ ԵՒ ԱՆՎԱՐԱՍԱՏ ՏԱՂԵՐ Գրիգորիս Աղթամարցոյ հարագատ տաղերը առ այժմ այս 24 տաղերն են (ի բաց առեալ թ. 12) :

Ձեռագիրք, Տեւհանց, Կոստանեանց, Տալեան, Պոտուրեան եւ այլք վերագրած են Գրիգորիսի նաեւ թիւ մը տաղերու, որոնք կամ երկրայական են եւ կամ անհարագատ : Այս տեղ մի առ մի քննութեան պիտի առնեմ զանոնք երկու բաժնով :

Ա. ԵՐԿԲԱՅԱԿԱՆ ՏԱՂԵՐ

1. Ամէն առուտու եւ լոյս... :

Ինձի ծանօթ բոլոր ձեռագիրներու մէջ անանուն է տաղիս երգիչը : Առաջին անգամ Ն. Մառ վերագրեց տաղս Գրիգոր Աղթամարցոյ. «ԺԶ. դարու բանաստեղծ Գրիգոր Աղթամարցին... հոգու մարմնից անջատուելուն մի բանաստեղծութիւն է նուիրել, այս անգամին հայ լեզուով, որը ձեռագրուած է (էջմ. Թ. 86, թղ. 12ա) խորագրուած է (այսպէս. «Տաղ զեղեցիկ ի վերայ այգոյ՝ հոգոյ եւ մարմնոյ» (Ամառնային ուղեւորութիւն. տէս վարը) : Մառ կը զարմանայ նոյն թիւ, որ Հ. Ղ. Ալիշան, Armenian Popul. Songs էջ նշանակած հեղինակը յանունէ :

Բ. խումբ:

- Ասոր ներկայացուցիչներն են.
 - ա. Վիեննայի Թ. 745:
 - բ. Մաշտոց յամէ 1692 յնւղոկիա:
 - գ. Բագմավէպ 1845 եւ 1907:
 - դ. Պալեան, Բ., էջ 104—105:
- Գ. խումբ:
- Այս խումբը կը կազմեն.
 - ա. Վիեննայի Թ. 671:
 - բ. Վիեննայի Թ. 976:
 - գ. Տաղարան Թ. 1 Շ. Վ. Սահակեանի: Ամէն թէ. դարէ: Կերեւոյ թէ ծագած է Բ. խումբէն:

Գ. խումբ:

- Կը կազմեն.
- ա. Վիեննայի Թ. 1002, Թղ. 106բ—107ա:
- բ. Էջմիածնի Գեւ. 281, 80բ—81բ (= Աճառեան, Տաղարան, Թղ. 171ա):
- գ. Հայէպ, Սիւրմէեան, Ա., էջ 383—384:

Ե. խումբ:

- Մէկ ձեռագիր միայն ունիմ.
- ա. Վիեննա, Թ. 1002, Թղ. 107ա—108ա:

Զ. խումբ:

- ա. Բագմավէպ 1897, էջ 131:

Է. խումբ:

Այս խումբը ամէնէն աւելի զարգացած եւ տարածուած է: Ունինք զայն առաւելապէս Մաշտոցներու մէջ.

- ա. Վիեննայի Թ. 664, 74ա—75բ:
- բ. " Թ. 663, 26ա—27բ.
- գ. " Թ. 402, 96բ—99ա.
- դ. " Թ. 360, 82բ—83բ.
- ե. " Թ. 415, 116ա—117բ.
- զ. " Թ. 200, 93ա—94ա.
- է. " Թ. 436, ԻԱ. 20բ—22բ.
- ը. Ն. Մառ, Ամսոն. Ուղեւոր., էջ 39—40:
- թ. Կոստանեանց, Գր. Աղթ. 92—94 (1695ին գրուած Տաղարանէ):
- ժ. Պալեան, Հայ Աշուղներ, Բ. 149 (բէն):

Տաղ մը, որ եօթնապատիկ խմբադրութեան կ'ենթարկուի, բնականաբար պիտի կորսնցնէր տաղասացին անունը:

- 2. Այբէն մինչեւ ի Բէն Բենէ գանգատիմ ես, Բաներս ում ասեմ Երբ դու լըսող չես...:

Տաղս ուղերձ մըն է նորատունկ վարդապետէ առ ուսուցիչն իւր Գրիգոր մեծ բարունի, Ա.—Բ. տողերով: Վիեննայի Թ. 344, 156ա (B), Վենետիկի Թ. 242, 7բ (Ժէ. դարէ. Սարգիսեան, Յուլյակ, Բ., 23), էջմիածնի Թ. 1998 (ասկէ հրտ. Չօպանեան, Հայ էջեր, 30—31) ունին այս տաղը անանուն: Միայն Չմմառ, Անտոնեանց Թ. 124, 15ա վերնագիր կը կրէ. «Ի Գրիգոր բանէ աշակերտէ ասացեալ»:

Հ. Յ. Տաշեան, Յուլյակ, էջ 1073, եւ Հ. Մ. Պոտուրեան, Բագմավէպ, 1905, էջ 499, ընծայած են տաղս Գրիգորիս Աղթամարցոյ, հաւանորէն «Գրիգոր մեծ բարունի» Գրիգորիսի ուսուցիչը համարելով:

Տաղս ըստ բովանդակութեան ճշդիւ կը պատշաճի Գրիգորիս Աղթամարցոյ, անով որ իր ուսուցիչն էր «Գրիգոր մեծ բարունի», որուն հանդէպ ունէր ան յարգանք եւ երախտագիտական զգածումներ. բայց թէ այն իղծերն ու գովութիւնները, զորոնք կ'արտայայտէ տաղասացը Գրիգորիս Աղթամարցոյ զրէչն են, չենք դանք որ եւ է յատկանիշ ինչպէս ապացուցանելու, նոյնպէս հերքելու: Անտոնեանց Թ. 124 Տաղարանի վկայութիւնը, թէ աշակերտը «Գրիգոր» կը կոչուէր եւ ոչ «Գրիգորիս», շատ աննպաստ է Աղթամարցոյ համար: ԺԵ.—ԺԶ. դարուն կային այլ եւ այլ Գրիգոր վարդապետներ, բարունի եւ համբակ, զորոնք զանազանիլը դժուարին է. բայց «Գրիգորիս» անունով աշակերտ շատ հազուադէպ: Տաղս ի մասին Աղթամարցոյ կը համարիմ երկբայական, թէպէտ իբրեւ ԺԲ. տաղ հրատարակած եմ Աղթամարցոյ հարազատ տաղերու շարքին, էջ 38—39:

Այսօրինակ անձիքներ հիւսել սովորութիւն էր ԺԵ.—ԺԷ. դարուն, նորապսակ վարդապետներու, որոնք զաւագան առած կը մեկնէին իրենց գործունէութեան ասպարէզը: Նման անձինքներ հասած են մեզի:

Տարօրինակ է միայն, որ այսպիսի յարգանքի եւ կարօտի քերթուածները նմանու-

թեան առնուեցան սիրոյ եւ կարօտի տաղերու համար, փոխանակուած երկու սիրող սրտերու մէջ. տաղեր, որոնք յընթացս ժամանակի փոփոխակներով զարգացան: Պիտի յիշեմ այս տեղ անոնցմէ մէկ քանին, որոնց մասին կարծիքներ արտայայտուեցան, թէ Գրիգորիս Աղթամարցոյ ըլլան:

- 3. Այբէն մինչեւ ի Բէն Բենէ գանգատիմ ես, Բարեւ է՛ր չես ի տալ, սուտ խռովեր ես:

- 4. Այբէն մինչեւ ի Բէն Բենէ գանգատիմ ես, Բագում խոց կայ սրտիս ամէնն դու ես...:

Հրտ. Չօպանեան, Հայ էջեր, 29—30:

Այս 4—5 տաղերը, որոնք Թ. Յի սկզբընաւորութիւնն ունին եւ յօրինուած են Ա—Բ սկզբնատառերով, առանց տարակուսի Ա—Բ սկզբնատառերով, առանց տարակուսի հիւսուած են անոր նմանութեամբ, այս անհամ իբրեւ «տաղ սիրոյ»: Ունիմ աչքի առ շեւ 10 ձեռագիր եւ երեք տարգիր օրինակներ, որոնք մեծապէս կը խոտորին իրարմէ: Կը ներկայացնեն անոնք զանազան խմբադրութիւններ, զորոնք կարելի է գասուրել 5 խումբերու: Հնագոյնը կը ներկայանայ Վենետիկի Թ. 529, որ գրուած է 1559ին եւ կը համապատասխանէ Վիեննայի Թ. 1 Բ. խումբը կը ներկայացնէ Սահակեանի Թ. 1887, Տաղարանը, Գ. խումբը Երկրագունդ Թ. 1371 էջ 71—72, էջմ. Գէ. 281, Վենետիկի Թ. 344ի: (Հրտ. Չօպանեան, Հայ էջեր, 26—28): Գ. խումբ՝ Սահակեանի Թ. 3 Տաղարանը: Ե. խումբ՝ Վենետիկի 730, որ յառաջանցած է Գ. խումբէն (հմմտ. Չօպանեան, անդ, 26—28. սարուածք):

- 5. Այբէն մինչեւ ի Բէն Գովեմ Բանի յիմ լեզուէն...:

Տաղս ունինք Վիեննայի Թ. 344, 64ա, Ե. Վ. Սահակեանի Թ. 2 եւ Երեւանի Պետ. Թանգ. 386, 6ա (պակաս Ո—Բ) տաղարաններու մէջ իբրեւ «տաղ սիրոյ», Բագմավէպ անանուն: Հ. Մ. Պոտուրեան, Աղթամարցոյ 1905, էջ 499, կը միտի Գր. Աղթամարցոյ համարիլ: Ա—Բ տողերով կարօտի կամ սիրոյ տաղ մըն է ուղղուած առ Սիրելին:

- 6. Գարունն է բացուէր, վարդն ի պախչանին...:

Այս շատ սիրուած զարնան տաղը կը գտնուի Բագմավէպ տաղարաններու մէջ. արժանացած է նաեւ տաղարութեան քանիցս անգամ: Կը դրէ Բագմավէպ 1861, էջ 148. «Ինչպէս որ կ'ըսեն զեռ ինչուան հիմա Խրիմու Հայոց մէջ կ'երգեցուի» այս տաղը: Բայց վիճելի է, թէ ո՞վ է անոր հեղինակը եւ ե՞րբ գրուած է: Ըլլալու է հին, 1568էն յառաջ, վասն զի առնուած է ան այս տարւոյն տաղարանը Արզար դպրի Տաղարանին մէջ (էջ 20—22): Չեռագիրներն եւ տաղարանները կ'ընծայեն զայն այլ եւ այլ անուններու.

- 1. Յակոբ Նետրաբեց Արծկեցի. Վենետիկի 2. Տաղարանը յամէ 1686 (Պոտուրեան, Բագմավէպ 1905, էջ 496), Կոստանեանցի 1695ին գրուած Տաղարանը (Գր. Աղթ., էջ 19) եւ Չմմառ, Անտ. 24, 48բ. միտարան ունին տաղիս վերջաւորութեան (Թ. 124).

Եւ ակէր Յակոբին երգողը տաղին Որ նա յԱրծկոյ հանդէպ ծովակին, Չթըմբերեալս մեղօք ի ախարս կրակին, Յիշեցէք յաղօթս ձեր վերստին:

- 2. Գրիգորիս Աղթամարցի. Երեւան, Պետ. Թանգ. 383, 26բ եւ 385, 159ա խորագրուած են. «Տաղ Գարնան Աղթամարցոյ»: Սրուանձտեանց, Մանանայ, էջ 254—255, Սրուանձտեանց, Մանանայ, էջ 254—255, վերնագիր ունի. «Նորին Գրիգորի»: Պալեան, Հայ Աշուղներ, Բ., 114—115 հրատարակած է տաղս Աղթամարցոյ տաղերու շարքին: Տաղիս Աղթամարցոյ ըլլալը «հաւանական» կը գտնէ Հ. Պոտուրեան, Բագմավէպ 1905, էջ 497:

- 3. Յակոբ Ստեցի: Հ. Ղ. Արիշան, Սրուան, էջ 220, ծան., տաղս յիշած է Յակոբ Ստեցոյ տաղերու շարքին:

- 4. Պաղտասար դպիր: Միանսարեանց, Գր. հայկական, էջ 373—374 տուած է տաղս եւ Ուղղելեաց բաժնին մէջ, էջ 51, անոր հեղինակ նշանակած է «Պաղտասար դպիր»: հաւանորէն նկատի առնելով որ տաղս գտած է Պաղտասար դպրի 1714ին հրատարակած Տաղարանին մէջ:

- 5. Աշըգ Շիրին: Հ. Էկինեան, Մասիս 1885, էջ 279—280, տաղիս հեղինակ համարած է Աշըգ Շիրին:

Հեղինակի կնճիոր լուծելու համար պէտք է նախ անտես ընել 3—5 անունները, որոնք ուշ ժամանակի կը պատկանին: Իսկ 1—2ի նկատմամբ հարկ է դիմել ձեռագիրներու,

որոնք երկու բնագիր կ'ընծայեն. ուստի գա- նազաններու է երկու խումբ: Ա. խումբի եր- կու ձեռագիրներ կը ճանչնան հեղինակ Յա- կոբ (Նեարարենց) Արծկեցի: Այս խումբին կը պատկանին.

- Չմմառ, Անտոնեանց թ. 124:
- Կ. Կոստանեանցի 1695ի Տաղարան:
- Վենետիկի ձեռագիր. 2. Տաղարան, 1681էն:
- Վիեննա, թ. 344, 40ա (B): 390, 30ա (x¹): 1002, 143բ (F¹): 343, 230ա (G): Արգար դպրի Տաղարան, էջ 20—22 (e¹): Տաղարան, Կ. Պոլիս, էջ 346—348 (g¹): Տաղարան, Կ. Պ. 1714 (g): Բնար հայկական, էջ 374—375 (e): Կոստանեան, Նոր Ժողովածոյք, Բ., 16—21 (K): Պալեան, Հայ աշուղներ, Բ., 114—115 (P¹): Բ. խումբ կը կազմեն (յանուն Գրիգորիս Աղթամարցոյ).
- Վիեննա, թ. 405, 1բ (E):
- Շ. Վ. Սահակեանի Տաղարան 1 (q):
- Շ. Վ. Սահակեանի Տաղարան 3 (s):
- Երեւան, թ. 383, 26բ: 385, 159ա:
- Սրուանձտեանց, Մանանայ (Q):
- Բազմալէս, 1861, էջ 148—149:
- Մասիս, 1885, էջ 279—280:
- Կոստանեանց, Նոր Ժողովածու, Բ., 16—21:

Բ. խումբը կը կրճատէ Ա. խումբին ինչ ինչ առնները եւ կը ներմուծէ ինքնուրոյն առններ, որոնք Աղթամարցոյ տաղերու նկա- րագիրը զգեցած են: Կրնանք ասկէ թերեւս հետեւցնել, թէ Գրիգորիս Աղթամարցի նոր խմբագրութեան ենթարկած է Յակոբ Արծ- կեցոյ տաղը:

Վերոյիշեալ ձեռագիրներէն զատ ծանօթ են ինձ էջմիածին, թ. 1636, 59բ: 2398, 153ա (1613): Երեւան, Պետ. Թանգ. 395, 92ա: Վենետիկ, թ. 242, 3ա: Հոռոմ, Վատիկան, թ. 16, 145բ: Լոնտոն, Բրիտ. Թանգ. 108, 265ա: Չմմառ, 73, 144ա եւ 177բ (Քէշի- շեան, Յուլյոյ): Հալէպ, Յուլյոյ Սիւրմէեան, Բ., 89). ամէնն ալ անանուն: Ասոնք կը կա- րօտին վերաբնութեան, ճշդելու թէ ո՞ր խումբին կը պատկանին:

Երկու խումբերուս ալ ինչ ինչ օրինակ- ներ ընդունած են, ուչ ժամանակ մը, առնե- րուն կից՝ յաւելուածս.

Գինով եմ, գինով, ցորեկս արեւով.
Գինով եմ, գինով, զիշերս երազով:

7. Մեր տէրն է բազմեր ի բարձր աքո- ռին...:

Տաղս իրբեւ «տաղ սիրոյ եւ ուրախու- թեան», ձեռագիր Տաղարաններու մէջ պա- ճուած է առհասարակ անանուն, դասուած Գր. Աղթամարցոյ տաղերու շարքին: Անա- նուն ունին հետեւեալ ձեռագիրները.

- էջմիածին, Գէորգեան թ. 281, 30ա:
- Շ. Վ. Սահակեանի Տաղարան թ. 3: Հալէպի թ. 28 (Սիւրմէեան, Յուլյոյ, Բ., էջ 88): Վիեննա, թ. 745 (= Կեւլա, թ. 43, 381բ). «Տաղ սիրոյ եւ ուրախութեան. Մաքուր պատկերովին ձայն է»: 1042, 97ա (Աճա- րեան, Բ ձեռագիր): Կոստանեանց, Տաղա- րան յամէ 1617:
- Երեւան, Պետ. Թանգ. 383, 33ա (եւ 395, 89ա?) «Տաղ ուրախութեան Աղթա- մարցոյ ասացեալ»: Լոնտոն, Բրիտ. Թան- գարան, թ. 108, 250ա «Տաղ սիրոյ Գրիգորիս Աղթամարցոյ»: Երեւան, Պետ. Ձեռա- գրատուն, թ. 7707, վերջին տունը ունի (Գիտական նիւթերի Ժողովածու, Ա. (1941) 174.

Չորս լից դու սրտիդ, ով Աղթամարցի... զոր այլք ունին՝

Չորս լից դու սրտիդ, որ թէզմ ըն անցնի, կամ «թէզմ անցանի»:

Հրատարակուած է՝

- Կ. Կոստանեանց, Նոր Ժողովածու, Գ., 25—27:
- Տ. Պալեան, Հայ աշուղներ, Բ., 133—135 (Աղթամարցոյ տաղերուն շարքին):
- Հ. Մ. Պոտուրեան, Բազմալէս, 1905, էջ 500, երբ տակաւին ծանօթ չէին Բ. խումբի ձեռագիրները, կը միտէր Գր. Աղթամարց- ոյ համարիլ տաղս, թէեւ Նորայր Բիւզան- դացի կարծիք յայտնած էր, թէ Քուչակինը ըլլայ այն:

Կոստանեանց նկատած էր թէ տաղիս եւ Ղազար Սերաստացոյ «Ծով աչք» տաղին մէջ կան նման տեղիքներ. անշուշտ վերջինս ա- ռաջնոյն ազդեցութեան տակ:

Ինձի կը թուի թէ Տաղս հրապարակ ելած է անանուն: Անոր երգիչը ազգուած է Աղթամարցոյ տաղերէն: Կը պակսի իրեն Աղթամարցոյ ստեղծագործ միտքը, քնքոյշ եւ սահուն ոճը, սեղմ պատկերաւորութիւնները, կենդանի նկարագիրը:

Տաղս Գրիգորիս Աղթամարցոյ ընծա- յուած է օրինակողներէն, որոնք նկատելով զայն Աղթամարցոյ տաղերու շարքին մէջ, համարած են Աղթամարցոյ:

8. Ֆիրգանէ պաշլատըմ պուլպուլէր կիպի...:

Սիրոյ տաղ է. Երեւանի թ. 385, 100բ, Վիեննայի թ. 344, 42բ եւ Երուսաղէմի թ. 1417, 212բ (1644) անանուն գիտեն տաղս: Իսկ էջմիածնի թ. 2394, 185ա (ԺԵ.) եւ Բրիտ. Թանգարանի թ. 108, 255բ (Յուլյոյ, 279) ունին «Տաղ Գրիգորի ասացեալ»: Հ. Պոտուրեան, Բազմալէս 1905, էջ 499, կ'ընծայէ տաղս Գրիգորիս Աղթամարցոյ. առանց որ եւ է ազգացոյց տալու:

Այնու որ տաղս Գրիգորի եւ ոչ Գրի- գորիսի անունը կը կրէ եւ գրուած է թրքե- րէնով խառն, չէնք կրնար համարձակ քայլն առնել վերագրելու զայն Աղթամարցոյ:

Վիեննայի թ. 979 Տաղարանին մէջ, որ օրինակութիւն մըն է 1680ին գրուած Տաղա- րանէ, կը բովանդակէ նաեւ այս տաղը մե- ծապէս աղաւաղուած կերպարանքի մէջ (Թղ. 45ա—46բ): Աղաւաղողն է Աշըխ Զարի, որ նոյն իսկ իր անունն սեպհականած է զայն. Քանի լաս 'ւ երբասս, ա՛յ աշըխ Զարի, Երբ չօղորմ'իր զբեզ, երբ ողորմ չունի...:

Բ.

ԱՆՀԱՐԱՐԱՍ ՏԱՂԵՐ

- 1. Ա՛յ իմ փառաւոր Աստուած փառք քեզ փառաց քազաւոր...: Իրբեւ «տաղ սիրոյ» կը գտնուի Օթս- Փորդ, Բողդիւրի Մատենադարանի թ. 121, Թղ. 83բ, հայերէն ձեռագրին մէջ, գրուած 1641ին (Baronian-Conybeare, Catalogue of Armenian Manuscripts in the Bodlian Li- brary, Oxford 1919, էջ 248): Հրատարակեց Կ. Յ. Բասմաջեան, Հայ Կին (Կ. Պ.) 1922, էջ 1106: Բասմաջեան կը գրէ. «Թերեւս ԺԵ. դարու նշանաւոր երգիչ Նահապետ Քուչակ եւ կամ ԺԶ. դարու սիրոյ երգիչներէն Գրի- գոր Աղթամարցի կաթողիկոսը» ըլլայ տա- ղս: Նոյն թերթին մէջ 1923, էջ 1202 անդրադառնալով տաղիս կը գրէ, թէ տաղս «անպայման վերագրելու է այս Գրիգորի- սին», այս ինքն Աղթամարցոյ: Տաղս ձեռա-

գրին մէջ անանուն է. եւ ցոյց չի տար որ եւ է կրուան «անպայման» Աղթամարցոյ ըն- ծայելու:

2. Անմահ բնութիւն առի ու գմահու օրն մոռացայ...:

Տաղս Հ. Տաշեան վերագրած է Աղթա- մարցոյ (Յուլյոյ, 1073): Կը պատկանի կամ Առաքել Սիւնեցոյ (Բազմալէս 1905, էջ 499, եւ Առաքել Սիւնեցի, 283—286). եւ կամ հա- մանուն Բաղիշեցոյ (Պալեան, Հայ Աշուղներ, Ա., 162—165). ձեռագրաց մէջ առ հասարակ անանուն:

3. Աշերդ է բուխ ու պէտ...:

Հ. Յ. Տաշեան, Յուլյոյ, էջ 1073 Աղ- թամարցոյ տաղերու շարքին մէջ գետեղած է տաղս, որ ձեռագիրներու մէջ Յովհաննէս (Թիւրքանցի) տաղասցի անունը կը կրէ. (Թիւրքանցի) առած է զայս Յ. Թիւրքանց- Կոստանեանց տաղը (էջ 37—40). Հմմտ. նաեւ ւոյ տաղերու մէջ (էջ 37—40). Հմմտ. նաեւ Հ. Մ. Պոտուրեան, Բազմալէս 1905, էջ 497—451:

4. Աստուած անկիզբն եւ անսահման, անտանիլի եւ անքարգման...:

Գարնան տաղ մը. որմէ Հ. Ալիշան, Հայրուսակ, էջ 195 տուն մը յառաջ բերելով կը գրէ. «Գրիգոր Աղթամարցի գուարճաէր կաթողիկոսն՝ գարնան ընծայած պատուներն երգելով՝ նախակարգէ զթութ». Նորայր Բիւզանդացի, Հանդէս Ամսօրեայ, 1923, էջ 255, անդրադառնալով տեղիքիս կը գրէ, թէ Տաղս ձեռագիրներու մէջ «անանուն է եւ յատկապէս Գրիգորիս Աղթամարցոյ յա- յատ հետի ի Գրիգորիս Աղթամարցոյ յա- ղուած է Կոնյոն»: Այսպէս անուն չեն կրեր Վիեննայի թ. 344, 199բ: 671, 159ա: 343, 264ա: Չմմառ, Անտոնեանց թ. 124, 343, 264ա: Իսկ էջմիածնի թ. 3998. հեղինակ կը 2բ: Իսկ էջմիածնի թ. 3998. հեղինակ կը մասնանշէ Յովհ. Թիւրքանցին. Գիտական նիւթերի Ժողովածու, 1 (1941), էջ 178—179:

5. Գեղեցիկ պատկեր կարմիր եւ կազեր...:

«Սիրոյ տաղ» մը, որ երբ անգամ օրի- նակուած է Վիեննայի թ. 343 ձեռագրին մէջ (Թղ. 92ա, 183բ, 271ա) կ'աւարտի. «Գրի- գոր խօսեցաւ դէմ հանդիպեցաւ...» (Յուլյ. 781): Նոյնը ունի Հալէպի թ. 28 (Սիւր- մէեան, Յուլյոյ, Բ., էջ 88):

Տաշեան (Յուլյոյ, 1073) վերագրած է Գրիգորիս Աղթամարցոյ. նոյնը կը կրկնէ

